ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒՆԻՍԻ 2025թվականի N 059-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ՓԱՄԲԱԿ ԿՈՄՈՒՆԱԼ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը իր կանոնադրությամբ սահմանված գործառույթներն իրականացնելու նպատակով անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել MAZ KO-449-41 (MAZ 438121-540-001) մակնիշի 900 CS 61 հաշվառման համարանիշի աղբատարը:

2. Վերը նշված գույքի պահպանման և շահագործման ծախսերն իրականացնել «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի միջոցներով:

3. «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել կամ հանձնել անհատույց օգտագործման:

4. «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ն իրավունք ունի իրեն ամրագրված գույքը Փամբակ համայնքի անունից հանձնել վարձակալության, որի ժամկետը չի կարող սահմանվել 1 տարուց ավելի:

5. Սույն որոշում ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրը:

Դեմ -0 Ձեռնպահ -0

Կողմ -13
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**